

եւ Պատրիարք Սրբազան Հօր Ծննդեան Արաբերէն եւ Հայերէն պատգամներէն յետոյ մեկնեցան: Պաշտամունքները շարունակուեցան Տաճարին մէջ: Աւագ սեղանին վրայ պատարագեց Կ. Պոլիսէն ժամանած Տ. Յարութիւն Աբեղայ Տամատեան: Պատարագին յաջորդեց Զրօրհնեաց արարողութիւնը: Զրօրհնէքի արարողութեան հանդիսապետն էր Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ճաշու ժամերգութեանէն ետք Ս. Ծննդեան Այրին մէջ պատարագեց Լուսարարապետ Սրբազան Հայրը: Պաշտամունքներու աւարտին, առաւօտեան ժամը 6:30-ին, Միաբանութիւնը թափօրով եւ երգեցողութեամբ բարձրացաւ Հայոց վանք, եւ բակին մէջ կարգացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս», ապա Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ:

ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ՀՕՐ ԳԼԽԱԻՈՐԱԾ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՅԸ ԵՐԻՔՈՎԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ՝ ՏԻԱՐ ՄԱՃԻՏ ԱԼ-ՖԻՏԱՆԻԻ

20 Յունուար, 2019-ին, առաւօտեան ժամը 9-ին, Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատախի Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, Աւագ Թարգման՝ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի, Գաւազանակիր եւ քարտուղար՝ Տ. Ներսէս Աբղ. Ալոյեանի, Դիւանապետ՝ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեանի, Կալուածոց Տեսուչ՝ Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեանի, Ելեւմտից Դիւանի Տեսուչ՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի երկրորդ անգամ ըլլալով այցելեցին աշխարհի ամենահին քաղաք՝ Երիքով եւ հանդիպում ունեցան կառավարիչին՝ Մեծայարգ Տիար Մաճիտ Ալ-Ֆիտանիին հետ: Պատրիարք Սրբազան եւ հոգեւոր հայրեր դիմաւորուեցան Երիքովի կառավարութեան ողջ աշխատակիցներուն կողմէ եւ անոնց հետ ձեռնուելէ ետք ներս հրաւիրուեցան: Իր խօսքին մէջ Երիքովի կառավարիչ՝ Տիար Մաճիտ Ալ-Ֆիտանի, ուրախութիւն յայտնեց Երուսաղէմի Հայ Պատրիարքի այցին համար եւ ըսաւ, որ այն շարունակական պիտի ըլլայ: Ապա Պատրիարք Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան ու հիւրասիրութեան համար եւ ապա յաջորդ տարի դարձեալ տեսնուելու յոյսով հրաժեշտ տուաւ կառավարիչին: Հանդիպման վերջաւորութեան Երիքովի կառավարիչը Պատրիարք Սրբազան Հօր եւ պատուիրակութեան անդամներուն ցոյց տուաւ Շասեր Արաֆաթի փոքրիկ թանգարանը, ուր կը պահուէին Արաֆաթի անձնական իրերը:

Հանդիպումէն յետոյ Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորած պատուիրակութեան միացան նաեւ ողջ Միաբանութիւնը, ժառանգաւոր սաներ եւ ուխտաւորներ, որոնք ուղղուեցան դէպի Յորդանան գետ, ուր տեղի ունեցաւ տարեկան Զրօրհնեաց արարողութիւնը: Յորդանանեան կողմէ գետափ եկած էր Յորդանանահայոց առաջնորդ՝ Տ. Աւետիս Ծ. Վրդ. Իփրաճեան իր գաղութի հաւատացեալներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՅԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատախի Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հրաւերով Մարտ 15-ին Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան եւ Ազգային Ժողովի պատուիրակութիւնը, որու կազմի մէջ էին ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարար՝ Տիար Արայիկ Յարութիւնեան, ԱԺ-ի

պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ՝ Տիար Անդրանիկ Քոչարեան, ԱԺ-ի գիտութեան, կրթութեան, մշակույթի, սփիւռքի, երիտասարդութեան եւ սպորտի հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ՝ Տիար Մխիթար Հայրապետեան, ՀՀ պաշտպանութեան փոխնախարար Տիար՝ Գաբրիէլ Բալայեան եւ ՀՀ կրթութեան եւ գիտութեան փոխնախարար՝ Օրիորդ Լուսինէ Առաքելեան, այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի հետ:

Այցին նպատակն էր ծանօթանալ Միաբանութեանս, Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի գործունէութեան ու հայկական ժառանգութեան պահպանման հետ կապուած խնդիրներուն, ինչպէս նաեւ նոր պայմանաւորուածութիւններ ձեռք ձգել երկկողմ փոխգործակցութեան զարգացման ուղղութեամբ: Հանդիպումէն ետք, պատուիրակուիւնը շրջայց կատարեց վանքապատկան սրբատեղիներ՝ եղաւ Սըրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, այցելեցին Սուրբ Թէոդորոս Զեռագրատուն, Կիւլպէնկեան Մատենադարան, Սբ. Հրեշտակապետաց եկեղեցի, Ժառանգաւորաց Վարժարան եւ Ընծայարան, Սբ. Թարգմանչաց Վարժարան եւ Մայր Դիւան եւ ստացան համապատասխան բացատրութիւններ վերոնշեալ վայրերու մասին:

**ՀՐԱԺԵՇՏ Կ. ՊՈԼՍՈՅ 84-ՐԴ ՊԱՏՐԻԱՐՔ՝
Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՅԵԱՆԻ**

17 Մարտ, 2019-ին, Կ. Պոլսոյ հայուիւնը փառաշուք ձեւով հրաժեշտ տուաւ իր հոգեւոր առաջնորդին՝ Պատրիարքական Աթոռոյ 84-րդ գահակալին՝ Երջանկայիշատակ Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեան Պատրիարք Սրբազանին: Հոգելոյս Պատրիարք Սրբազան Հօր յուղարկաւորութեան եւ վերջին օժման արարողութիւնները կատարուեցան Գումգաբուի Սուրբ Աստուածածին Աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ: Վերջին Օծումը կատարեց Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը, որ մեկնած էր Իսթանպուլ՝ մասնակցելու Մեսրոպ Պատրիարք Սրբազան Հօր յուղարկաւորութեան արարողութեանց: Վերջին Օծումէն ետք, Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան իր դամբանական խօսքին մէջ ըսաւ. «Կ. Պոլսոյ համայնքը տակաւին նոյնիսկ չէր կրցած հաշտուիլ հոգելոյս Պատրիարքի հիւանդութեան հետ, սակայն վրայ հասաւ անգուլթ մահը, որու հետեւանքով Պոլսահայուիւնը դէմ յանդիման մնաց սուգի»: Երջանկայիշատակ Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեան Պատրիարք Սրբազան Հօր մարմինն ամփոփուեցաւ Շիշլիի գերեզմանատան մէջ:

«Յիշեսցէ Տէր զհոգի ծառային Իւրոյ եւ հանգուցէ զնա ի լոյս երեսաց Աստուածութեան Իւրոյ. ամէն»:

**ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ ՏԻԱՐ ՄԱՅՔ ՊՈՄՊԷՈՅԻ ԱՅՅԸ
Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐ**

ԱՄՆ պետքարտուղար տիար Մայք Պոմպէո այցելեց Սուրբ Յարութեան տաճար եւ եղաւ հայկական բաժնին մէջ:

Հայապատկան Աստուածամօր ուշաթափման սրբավայրին մէջ տիար Պոմպէոն մոմ վառեց, ապա Ս. Յարութեան տաճարի տեսուչ՝ Հոգշ. Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան Երուսաղէմի Հայ Պատրիարք Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան կողմէ բարիգալուստ մաղթեց անոր եւ խօսեցաւ Սուրբ Երկրին մէջ